Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի մարտի 23-ի N 10-3 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
23 մարտի 2022 թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ SCOPUS / WEB OF SCIENCE ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՏՀ) աշխատակիցներին Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների համար հոնորարների տրամադրման կարգը (այսուհետ՝ կարգ) բխում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2024 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2021-2026 թթ. «Բաց գիտության» ռազմավարության» պահանջներից և որդեգրած քաղաքականությունից:

2. Սույն կարգի նպատակն է խթանել ՀՊՏՀ ակադեմիական կազմի գիտահետազոտական գործունեության ակտիվության բարձրացումն ու հրապարակումները Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում՝ նպաստելով ՀՊՏՀ հետազոտողների, ինչպես նաև համալսարանի վարկանիշի և միջազգային ճանաչելիության մեծացմանը:

3. Սույն կարգով սահմանվում են Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակվելու համար ՀՊՏՀ աշխատակիցներին հոնորարի տրամադրման պայմանները և կարգը:

2. SCOPUS / WEB OF SCIENCE ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Հոնորարը տրամադրվում է ՀՊՏՀ աշխատակիցներին Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում փաստացի հրապարակված յուրաքանչյուր գիտահետազոտական աշխատանքի համար:

5. Հոնորարը տրամադրվում է, եթե Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում հրապարակված հոդվածներում ՀՊՏՀ-ն նշված է որպես հեղինակի աշխատավայր:

6. Հոնորար տրամադրվում է հեղինակի(ների) կողմից ներկայացվող գիտահետազոտական աշխատանքի հրապարակման ծախսերը հավաստող փաստաթղթում՝ վճարման անդորագրում նշված գումարի չափով՝ առանց հարկերի և պարտադիր այլ վճարների:

7. Համահեղինակների առկայության դեպքում տրամադրվող հոնորարի գումարը հավասարաչափ բաժանվում է համահեղինակների միջև:

8. Հոնորարը ստանալու համար հեղինակը(ները) գիտահետազոտական աշխատանքի փաստացի հրապարակումից հետո պետք է եռամսյա ժամկետում ներկայացնի(են) դիմում ռեկտորին և անհրաժեշտ փաստաթղթերը (ցանկը կցվում է): Դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով:

9. Ռեկտորի հանձնարարությամբ գիտության բաժինը ստուգում է գիտահետազոտական աշխատանքի հեղինակի կողմից ներկայացված դիմումում նշված տվյալների իսկությունը և համապատասխանությունը սույն կարգով նախատեսված պահանջներին և համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ռեկտորին հոնորար վճարելու վերաբերյալ:

10. Հոնորարը վճարվում է ռեկտորի համապատասխան հրամանով:

11. Հոնորարի չափը կախված չէ հեղինակի պաշտոնից, գիտական աստիճանից և գիտական կոչումից:

12. Համալսարանի ասպիրանտներին և հայցորդներին Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակված գիտահետազոտական աշխատանքների համար հոնորար չի տրամադրվում:

13. Եթե ասպիրանտը/հայցորդը Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտահետազոտական աշխատանքը հրապարակել է գիտական ղեկավարի կամ համալսարանի աշխատակից հանդիսացող ակադեմիական կազմի այլ անդամի (կամ անդամների) հետ համահեղինակությամբ, ապա հոնորար տրամադրվում է միայն գիտական ղեկավարին կամ համալսարանի աշխատակցին (կամ աշխատակիցներին)՝ սույն կարգի դրույթներին համապատասխան:

14. Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում անվճար հրապարակված գիտահետազոտական աշխատանքների համար հոնորար չի տրամադրվում:

ՑԱՆԿ

SCOPUS / WEB OF SCIENCE ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Դիմում ՀՊՏՀ ռեկտորին, որտեղ նշվում է՝
   1) հեղինակի(ների) Ա.Ա.Հ., պաշտոնը ՀՊՏՀ-ում, հեռախոս, e-mail,
   2) գիտական աշխատության անվանումը, ամսագրի անվանումը և համարը, հրապարակման էջերը, տարեթիվը,
   3) ամսագրի և գիտական աշխատության DOI, ամսագրի ISSN,
   4) ամսագրի և հոդվածի հղումները,
   5) Scopus / Web of Science Author ID (առկայության պարագայում):
2. Ամսագիրը հրատարակող կազմակերպության կողմից գիտական աշխատության հրապարակման դիմաց հեղինակին ներկայացրած հաշիվ վավերագրի պատճենը, ներկայացրած հաշիվ վավերագրի վճարման կտրոնի պատճենը, որում նշված է հոդվածի վերնագիրը, վճարողի անունը և ազգանունը:
3. Ամսագիրը հրատարակող կազմակերպության և գիտական աշխատության հեղինակի(ների) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը (առկայության պարագայում):